ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 201 - Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 2,146,500,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Համայնքների զարգացում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02569972) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) Հայկական բարեգործական ընդհանուր միություն հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 02636688) 2020 թվականի մարտի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2026 թվականի հունվարի 14-ն ընկած ժամանակահատվածում գրասենյակային տարածքի վարձակալություն՝ ամսական 4,306,502 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Հայկական բարեգործական ընդհանուր միություն հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 02636688) 2020 թվականի հոկտեմբերի 12-ին կնքված՝ թիվ AGBU/F-034-20 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2026 թվականի հունվարի 14-ն ընկած ժամանակահատվածում ոչ բնակելի տարածքի վարձակալություն՝ ամսական 100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Տուտոր Պլատֆորմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00196563) 2020 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ծրագրային ապահովման ծառայությունների մատուցում՝ ամսական 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Սիթի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01282006) 2023 թվականի նոյեմբերի 20-ին կնքված՝ թիվ 3 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում սննդամթերքի, կենցաղային և տնտեսական պարագաների ձեռքբերում՝ 9,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03520262) 2018 թվականի ապրիլի 4-ին կնքված՝ N 033041812185 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում գազամատակարարման աշխատանքների իրականացում՝ 36,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Ասողիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00835755) 2020 թվականի հունվարի 17-ին կնքված՝ N Վ-17/01/2020 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում տպագրական ծառայությունների մատուցում՝ 20,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Դիջիթեքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02260425) 2022 թվականի հոկտեմբերի 27-ին կնքված՝ N U-27/10/2022-01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի

31-ն ընկած ժամանակահատվածում տպագրական ծառայությունների մատուցում՝ 5,464,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Թի Ըքաունթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01560406) 2023 թվականի դեկտեմբերի 22-ին կնքված՝ N 24-01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում խորհրդատվական և սպասարկման ծառայությունների մատուցում՝ ամսական 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2018 թվականին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 58,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Սի Փի Էս Էներջի գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02847546) 2023 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված՝ N 090/2023 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում բենզինի կամ բենզինի կտրոնների ձեռքբերում՝ 15,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

11) «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2019 թվականի մարտի 1-ին կնքված՝ N 20624683 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ինտերնետ և բջջային կապի ծառայությունների մատուցում՝ 6,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

12) «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2020 թվականի հուլիսի 16-ին կնքված՝ N 21435204 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում մոբայլ ինտերնետ ծառայությունների մատուցում՝ ամսական 22,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

13) «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2017 թվականի նոյեմբերի 1-ին կնքված՝ N 22583941 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ինտերնետ կապի ծառայությունների մատուցում՝ ամսական 450,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

14) «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2017 թվականի փետրվարի 28-ին կնքված՝ N 19223028 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում շարժական կապի ծառայությունների մատուցում՝ 9,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

25.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ